ՈՐՈՇՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի

գիտական խորհրդի 2016թ. հունվարի 25-ի նիստի

(արձանագրություն N8)

Քննարկելով գիտական խորհրդի 2012թ. փետրվարի 3-ի N6 նիստում հաստատված <<Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ֆակուլտետի դեկանի ընտրության>> և <<Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության>> կարգերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հարցը և ղեկավարվելով Համալսարանի կանոնադրության 36-րդ կետի 9-րդ ենթակետով՝

համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ֆակուլտետի դեկանի ընտրության կարգում կատարել հետևյալ փոփոխությունները.

   1) 26-րդ կետը կարդալ՝

   26. Համալսարանի ռեկտորը ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրված անձի հետ հինգ տարի ժամկետով կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան հրամանագրում է դեկանի պաշտոնում:

   2) Հանել 27-րդ կետը:

2. <<Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության>> կարգում կատարել հետևյալ փոփոխությունները.

   1) 4-րդ կետը կարդալ՝

   4.Ամբիոնի վարիչը ընտրվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից փակ (գաղտնի) քվեարկությամբ՝ հինգ տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ զբաղեցնել ամբիոնի վարիչի պաշտոնը:

   2) 29-րդ կետը կարդալ՝

   29.Առանձնահատուկ դեպքերում (նոր ստեղծվող ֆակուլտետ կամ համահամալսարանական ամբիոն, ամբիոնի վարիչի թեկնածության բացակայություն և այլն) Համալսարանի ռեկտորն իրավասու է առավելագույնը մեկ տարի ժամկետով ամբիոնի վարիչի պաշտոնում հրամանագրել սույն Կարգի պահանջները բավարարող տվյալ կամ այլ բուհի/կազմակերպության/ մասնագետի և հրամանագրման ժամկետի ավարտին կազմակերպել ամբիոնի վարիչի նոր ընտրություն:

   3) 30-րդ կետը կարդալ՝

   30. Ընտրված անձի հետ ռեկտորը կնքում է աշխատանքային պայմանագիր և հրամանագրում ամբիոնի վարիչի պաշտոնում հինգ տարի ժամկետով:

   4) Հանել 31-րդ կետը:

Գիտական խորհրդի նախագահ Ռուբեն Միրզախանյան

Հաստատված է

«Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան» ՊՈԱԿ ռեկտորի
08.02.2012 թվականի
թիվ 2-96 հրամանով

Ընդունվել է գիտական խորհրդի
3.[illegible].2012 թվականի
թիվ 6 նիստում

Գիտական խորհրդի նախագահ,
Ռեկտոր Ռ.Կ. Միրզախանյան

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Երևան 2012

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ամբիոնի վարիչի ընտրության, աշխատանքային պայմանագրի կնքման և պաշտոնում հրամանագրման կարգը:
2. Ամբիոնի իրավասությունները և գործունեության սկզբունքները կարգավորվում են **Համալսարանի** կանոնադրությամբ, ամբիոնի կանոնակարգով և այլ իրավական ակտերով:
3. Ամբիոններն ըստ կառուցվածքային ենթակայության լինում են՝
   1) համահամալսարանական (գործունեությունը համակարգում է ռեկտորը, պրոռեկտորը),
   2) ֆակուլտետային (գործունեությունը համակարգում է ֆակուլտետի դեկանը):
4. *Ամբիոնի վարիչը ընտրվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից միակ (գաղտնի) քվեարկությամբ՝ հինգ տարի ժամկետով:* Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ զբաղեցնել ամբիոնի վարիչի պաշտոնը: Ամբիոնի վարիչը միաժամանակ Համալսարանում երկու վարչական պաշտոն չի կարող զբաղեցնել:

II. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

5. **Համալսարանում** սահմանվում է ամբիոնի վարիչի պաշտոնի մրցույթային կարգ:
6. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է ընտրությունից առնվազն 40 օր առաջ: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումների ներկայացման վերջնաժամկետը:
7. Ամբիոնի վարիչի պաշտոնի մրցույթին, որպես կանոն, մասնակցում են գիտությունների դոկտորի գիտական աստիճան կամ պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձինք, իսկ առաջին մրցույթից հետո ամբիոնի վարիչի պաշտոնը թափուր մնալու և կրկնակի մրցույթ հայտարարելու դեպքում նաև գիտությունների թեկնածուի գիտական աստիճան կամ դոցենտի գիտական կոչում ունեցողները: Բացառություն են կազմում արվեստի, մշակույթի, սպորտի (ֆիզիկական կոչտուրայի) ամբիոնները, որոնց համար գիտական աստիճանի (կոչման) առկայությունը անհրաժեշտ չէ: Առաջնային են համարվում հավակնորդի ստեղծագործական ավանդը և նրա ստեղծագործական գործունեության ճանաչումը հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:
8. Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները հայտարարության հրապարակումից հետո 30 օրվա ընթացքում **Համալսարանի** գիտական քարտուղարին են ներկայացնում՝
   ա) դիմում ռեկտորին,
   բ) նահանջի հաշվառման անհատական թերթիկ,
   գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
   դ) համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական տեսքով,
   ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
   զ) գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
   է) տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,
   ը) տվյալներ պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:
9. Պաշտոնի հավակնորդի դիմումը չի ընդունվում, եթե նրա որակավորումը չի բավարարում մրցույթի պայմաններին կամ պահպանված չէ դիմումի ներկայացման ժամկետը:

III. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

10. Ամբիոնի վարիչի ընտրությունը կազմակերպվում է **Համալսարանի** գիտական խորհրդում (այսուհետ՝ Խորհուրդ):

11. Թեկնածուները կարող են մասնակցել նիստին և ներկայացնել իրենց նախընտրական ելույթները:
12. Ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուին փակ (գաղտնի) քվեարկության թողնելու մասին որոշումն ընդունվում է յուրաքանչյուր թեկնածության քննարկումից հետո, **Խորհրդի** անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:
Թեկնածուն կարող է հայտնել ինքնաբացարկ մինչև սույն կետի 1-ին պարբերությամբ նշված որոշման ընդունումը:
16. **Խորհրդի** նախագահը ներկայացնում է փակ (գաղտնի) քվեարկության կարգը:
17. Նախագահի առաջարկով փակ (գաղտնի) քվեարկության անցկացման և արդյունքների ամփոփման համար **Խորհուրդը** բաց քվեարկությամբ իր կազմից ընտրում է թվով հինգ անդամից ոչ պակաս հաշվիչ հանձնաժողով:
Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները չեն կարող առաջադրել թեկնածուներ կամ առաջադրվել հաշվիչ հանձնաժողովի կազմում:
Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
15. Ամբիոնի վարիչի ընտրության քվեաթերթիկում՝
   1) Մեկ թեկնածության քվեարկության դեպքում քվեաթերթիկի մեջ պետք է լինեն «կողմ» և «դեմ» բառերը (հավելված 1):
   2) Մեկից ավելի թեկնածությունների քվեարկության համար քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով նշվում են յուրաքանչյուր թեկնածուի ազգանունը, անունը և վերջին տողում «բոլորին դեմ եմ» բառը (հավելված 2):
16. **Խորհրդի** յուրաքանչյուր անդամ հաշվիչ հանձնաժողովից ստանում է մեկ քվեաթերթիկ և ստորագրում **Խորհրդի** անդամագրքում:
17. Մեկ թեկնածուի քվեարկության դեպքում քվեաթերթիկում նշվում է «կողմ» կամ «դեմ» բառը:
Մեկից ավելի թեկնածուների դեպքում քվեարկվում է միայն մեկ թեկնածուի օգտին կամ նշվում է «բոլորին դեմ եմ»:
18. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (հավելված 3): Մեկից ավելի թեկնածությունների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության:
Անվավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝
ա) թողնված կամ նշված են թե՛ «կողմ» և թե՛ «դեմ» բառերը (միակ թեկնածուի քվեարկության դեպքում),
բ) նշված են երկու և ավելի թեկնածություններ (մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում),
գ) կատարված են սույն կարգով չնախատեսված նշումներ, ընդգծումներ և այլ նշաններ:
Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը:
19. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է արձանագրությունը, որից հետո հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է **Խորհրդի** անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:
20. Ընտրված է համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկել է Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությունը:
21. Երկուսից ավելի թեկնածուների դեպքում, եթե որևէ թեկնածու չի ստացել սույն կարգի 20-րդ կետով սահմանված ձայներ, Խորհրդի նույն նիստում կազմակերպվում է ընտրության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուները:
22. Սույն կարգի 20-րդ և 21-րդ կետերով սահմանված կարգով որևէ թեկնածուի կողմից համապատասխան քանակի ձայներ չստանալու դեպքում նշանակվում է ամբիոնի վարիչի նոր ընտրություն:
23. Ամբիոնի վարիչի ընտրության արդյունքները հաստատվում են **Խորհրդի** նիստում՝ բաց քվեարկությամբ. Խորհրդի որոշումը ներկայացվում է Համալսարանի ռեկտորին՝ հրամանագրման:

. Ամբիոնի վարիչի ընտրության վերաբերյալ ընդունված որոշման հետ Համալսարանի ռեկտորի հիմնավորված անհամաձայնության դեպքում (գրավոր ներկայացվում է խորհրդին) կազմակերպվում է ամբիոնի վարիչի նոր ընտրություն:

25. Ամբիոնների միացումից կազմավորված նոր ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալումը կատարվում է **Համալսարանի** ռեկտորի հրամանով՝ մինչև նոր մրցույթ հայտարարելը:
26. Ամբիոնների բաժանման դեպքում **Համալսարանի** ռեկտորի հրամանով նշանակվում են նոր ամբիոնների վարիչների պաշտոնակատարներ՝ մինչև մրցույթի հայտարարումը:
27. Ամբիոնի վարիչի պայմանագրի ժամկետը լրանալուց հետո մինչև նոր մրցույթ կազմակերպելը ռեկտորը նշանակում է ամբիոնի վարիչի պաշտոնակատար:
28. Նախկին մրցույթով (պայմանագրով) սահմանված ժամկետի ավարտից հետո պաշտոնավարումը շարունակելու դեպքում ամբիոնի վարիչը պահպանում է իր կարգավիճակը:
29. Առանձնահատուկ դեպքերում (նոր ստեղծվող ֆակուլտետ կամ համահամալսարանական ամբիոն, ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածության բացակայություն և այլն) **Համալսարանի** ռեկտորն իրավասու է ամբիոնի վարիչի պաշտոնում հրամանագրել սույն Կարգի պահանջները բավարարող տվյալ կամ այլ բուհի /կազմակերպության/ մասնագետի և հրամանագրման ժամկետի ավարտին կազմակերպել ամբիոնի վարիչի նոր ընտրություն:

III. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

30. Ընտրված անձի հետ ռեկտորը անքում է աշխատանքային պայմանագիր և հրամանագրում ամբիոնի վարիչի պաշտոնում մինչև հինգ տարի ժամկետով:
31. Պայմանագրով նախատեսված աշխատանքները պատշաճ կատարելու դեպքում Համալսարանի ռեկտորին իրավունք ունի օրենքով սահմանված կարգով և հիմք ընդունելով ֆակուլտետի խորհրդի (Համալսարանի գիտական խորհրդի) դրական կարծիքը՝ ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո նույն անձի հետ կնքել նոր աշխատանքային պայամագիր՝ մինչև հինգ տարի ժամկետով առանց մրցութային ընտրության:
32. Պայմանագիրը կարող է լուծվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 1

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Համալսարանի գիտական խորհրդի _____ նիստում

(արձանագրություն թիվ _____) _____ Ամբիոնի վարիչի փակ

(գաղտնի) քվեարկության

_____ ☐ Կողմ * ☐ Դեմ

* Թեկնածությանը կողմ լինելու դեպքում նշվում է «Կողմ» բառը, իսկ դեմ լինելու դեպքում նշվում է <<Դեմ>> բառը՝ համապատասխան տողի վանդակում կատարվում է «√» նշումը:

Հավելված 2

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Համալսարանի գիտական խորհրդի _____ նիստում (արձանագրություն
տարեթիվ, ամսաթիվ

թիվ _____) _____ Ամբիոնի վարիչի փակ (գաղտնի)
Ամբիոնի անվանումը

քվեարկության

1.*	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
2.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
3.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
4.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
5.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
6.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
7.	ԲՈԼՈՐՆԵՐԻ ԴԵՄ ԵՄ	

*Որևէ Թեկնածուի կողմ լինելու կամ բոլորին դեմ լինելու դեպքում քվեաթերթիկում համապատասխան տողի վանդակում նատարվում է <<√>> նշումը:

Հավելված 3

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

հաշվիչ հանձնաժողովի նիստի

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է Համալսարանի գիտական խորհրդի _____
տարեթիվ, ամսաթիվ

նիստում (արձանագրություն թիվ _____) հետևյալ կազմով՝

1. _____
ազգանուն, անուն
2. _____
ազգանուն, անուն
3. _____
ազգանուն, անուն
4. _____
ազգանուն, անուն
5. _____
ազգանուն, անուն

Համալսարանի գիտական խորհրդի _____ անդամներից ներկա էին _____ -ը:

Քվեարկվել է են՝ _____ ամբիոնի վարիչի պաշտոնի
անվանումը

թեկնածությունը (ները)՝

Քվեարկությանը մասնակցել է Համալսարանի գիտական խորհրդի _____ անդամ:

Բաժանվել է _____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

- Միակ թեկնածուի դեպքում՝

Թեկնածուի ազգանունը, անունը	Կողմ	Դեմ	Անվավեր

- Մեկից ավելի թեկնածուների դեպքում՝

Թեկնածուի ազգանունը, անունը	Կողմ	Դեմ	Անվավեր

Անվավեր քվեաթերթիկների քանակը _____:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով _____
ազգանուն, անուն

ընտրված է (չի ընտրված) _____ ամբիոնի վարիչի պաշտոնում:
Ամբիոնի անվանումը

Կամ՝

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով _____

Ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում Ամբիոնի վարիչի պաշտոնում, իսկ ներքոհիշյալ Թեկնածուները՝

1. _____

ազգանուն, անուն

2. _____

ազգանուն, անուն

մասնակցում են ընտրության երկրորդ փուլին:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝

_____ _____

ստորագրություն անուն ազգանուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ

1. _____ _____

ստորագրություն անուն ազգանուն

2. _____ _____

ստորագրություն անուն ազգանուն

3. _____ _____

ստորագրություն անուն ազգանուն

4. _____ _____

ստորագրություն անուն ազգանուն

5. _____ _____

ստորագրություն անուն ազգանուն